

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմերը,

ձգտելով խորացնել տնտեսական ինտեգրումը եւ զարգացնել համագործակցությունն արժութային եւ ֆինանսական ոլորտում,

աջակցելով Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների տարածքում ապրանքների, ծառայությունների եւ կապիտալի ազատ տեղաշարժի ապահովմանը,

ճանաչելով Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների արտաքին առևտրային եւ ներդրումային գործառնություններում ազգային արժույթների դերի բարձրացման նպատակներով Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում արժութային քաղաքականությունը համակարգելու վերաբերյալ համատեղ գործողությունների եւ նշված արժույթների փոխադարձ փոխարկումն ապահովելու կարելիությունը,

հիմնվելով իրավահավասարության եւ փոխշահավետության սկզբունքների վրա՝ հաշվի առնելով Միասնական տնտեսական տարածքի անդամ պետություններից յուրաքանչյուրի տնտեսական առանձնահատկությունները՝

համաձայնեցին հետեւյալի մասին՝

#### Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով գործածվում են հետեւյալ եզրույթները՝

«սույն Համաձայնագրի մասնակից պետության ռեզիդենտ»՝ սույն Համաձայնագրի մասնակից պետություններից մեկի ռեզիդենտ՝ տվյալ պետության արժույթային օրենսդրության համաձայն,

«սույն Համաձայնագրի մասնակից պետության ոչ ռեզիդենտ»՝ սույն Համաձայնագրի մասնակից պետություն չհանդիսացող պետության ռեզիդենտ,

«երրորդ երկիր»՝ սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետություն կամ իրավազորություն,

«արժույթային սահմանափակումներ»՝ արժույթային գործառնությունների նկատմամբ օրենսդրորեն սահմանված սահմանափակումներ՝ արտահայտված արժույթային գործառնությունների ուղղակի արգելքով, դրանց ծավալների, թվի եւ անցկացման ժամկետների, վճարման արժույթի տեսակի սահմանափակմամբ, դրանք անցկացնելու համար հատուկ թույլտվություններ (լիցենզիաներ) ստանալու պահանջներ սահմանելով, անցկացվող արժույթային գործառնության գումարի մի մասը, ամբողջ գումարը կամ ամբողջ գումարի կրկնապատիկ գումարը պահուստավորելով, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքում հաշիվներ բացելու եւ վարելու հետ կապված սահմանափակումներ,

«ազատականացման միջոցներ»՝ միջոցներ, որոնց արդյունքն է սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների միջեւ արժույթային գործառնությունների նկատմամբ, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ոչ ռեզիդենտների հետ գործառնությունների նկատմամբ արժույթային սահմանափակումների թուլացումը կամ վերացումը:

Սույն Համաձայնագրի 3–5-րդ հոդվածների դրույթներն իրականացնելու համար կնքվող միջազգային պայմանագրերում կարող են գործածվել դրանց կատարումն ապահովող այլ եզրույթներ:

## **Հոդված 2**

Կողմերը մշակում եւ վարում են արժույթային քաղաքականությունը հետեւյալ սկզբունքների հիման վրա՝

1) Կողմերն իրականացնում են արժութային քաղաքականություն ձեւավորելու եւ վարելու մոտեցումների ներդաշնակեցումը եւ մոտարկումը փուլերով եւ այն ծավալով, որը համապատասխանում է ինտեգրացիոն համագործակցության ձեւավորված մակրոտնտեսական պահանջներին,

2) Արժութային ոլորտում ինտեգրացիոն գործընթացները զարգացնելու, արժութային քաղաքականությունը համակարգելու եւ համաձայնեցնելու նպատակով՝ Կողմերն ազգային եւ միջպետական մակարդակով ստեղծում են անհրաժեշտ կազմակերպարավական պայմանները,

3) Կողմերն արժութային ոլորտում չեն ձեռնարկում գործողություններ, որոնք կարող են բացասական կերպով ազդել ինտեգրացիոն գործընթացների վրա, իսկ դրանք հարկադրաբար կիրառելու դեպքում, ձգտում են նվազեցնել այդպիսի գործողությունների հետեւանքները,

4) Կողմերը վարում են տնտեսական քաղաքականություն, որն ուղղված է ինչպես սույն Համաձայնագրի մասնակից պետություններից յուրաքանչյուրի ներքին արժութային շուկայում, այնպես էլ միջազգային արժութային շուկաներում Կողմերի ազգային արժույթների հանդեպ վստահությունը բարձրացնելուն:

### **Հոդված 3**

Համաձայնեցված արժութային քաղաքականություն վարելու նպատակներով Կողմերը ձեռնարկում են հետեւյալ միջոցները՝

1) ազգային արժույթների փոխարժեքի քաղաքականության համակարգում (այսուհետ՝ փոխարժեքային քաղաքականություն)՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների փոխհաշվարկներում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային արժույթների կիրառման ընդլայնումն ապահովելու համար,

2) վճարային հաշվեկշռի ընթացիկ եւ հիմնական հոդվածներով ազգային արժույթների առանց սահմանափակումների փոխարկման ապահովում՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների բանկերով սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների կողմից առանց սահմանափակումների

արտարժույթ գնելու եւ վաճառելու հնարավորության համար պայմաններ ստեղծելու միջոցով,

3) Կողմերի ազգային արժույթների ուղղակի փոխադարձ գնանշումների ապահովում եւ պայմանների ստեղծում,

4) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջեւ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային արժույթներով փոխադարձ հաշվարկների անցկացման ապահովում,

5) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների միջեւ փոխադարձ առետորին խոչընդոտող՝ ազգային արժույթների պաշտոնական արժույթային փոխարժեքների բազմակիության բացառումը,

6) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի կողմից ազգային արժույթների պաշտոնական փոխարժեքների սահմանում՝ արժեթղթերի շուկայում ձեւավորված փոխարժեքի կամ ազգային արժույթի եւ ԱՄՆ դոլարի կրոս կուրսերի հիման վրա,

7) արժույթային քաղաքականության միջոցառումները մշակելու եւ համակարգելու նպատակով փոխադարձ խորհրդակցությունների անցկացում,

8) արժույթային շուկայի զարգացման վիճակի եւ հեռանկարների մասին պարբերական հիմքով տեղեկատվության փոխանակում,

9) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ինտեգրված արժույթային շուկայի ձեւավորում,

10) Կողմերից յուրաքանչյուրի կողմից սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտներ հանդիսացող եւ իրենց հիմնադրման վայրի պետության օրենսդրության համաձայն արժույթային գործառնություններ իրականացնելու իրավունք ունեցող բանկերին իրենց ազգային արժույթային շուկա մտնելու թույլտվության ապահովում՝ այդ Կողմի ռեզիդենտ բանկերին տրամադրված իրավական ռեժիմից ոչ պակաս բարենպաստ ռեժիմի պայմաններով միջբանկային փոխարկային գործառնություններ անցկացնելու համար,

11) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների բանկերին ազատ փոխարկման իրավունքի տրամադրում՝ իրենց թղթակցային հաշիվներին գտնվող սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային արժույթներով իրենց պատկանող միջոցներից երրորդ երկրների արժույթներով,

12) ազգային արժույթային շուկաների հետագա զարգացում եւ իրացվելիության բարձրացում,

13) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի արժույթային ակտիվները սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային արժույթներում, այդ թվում՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների պետական արժեթղթերում տեղաբաշխելու համար պայմանների ստեղծում,

14) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների միջեւ վճարահաշվարկային հարաբերությունների մեխանիզմի կատարելագործում՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների միջեւ փոխհաշվարկներում ազգային արժույթների օգտագործումն ընդլայնելու հիման վրա:

#### **Հոդված 4**

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրության եւ Կողմերի արժույթային իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը մոտարկելու եւ ազատականացման միջոցներ ձեռնարկելու նպատակներով՝ Կողմերը համաձայնեցին հետեւյալի մասին՝

1) Կողմերն ապահովում են արդյունավետ տնտեսական համագործակցությանը խոչընդոտող արժույթային սահմանափակումների աստիճանական վերացումը՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքում գտնվող բանկերում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների կողմից հաշիվներ բացելու կամ վարելու եւ արժույթային գործառնությունների մասով,

2) Կողմերը սահմանում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքում գտնվող բանկերում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ոչ ռեզիդենտների հաշիվներ, ինչպես նաեւ երրորդ երկրներում գտնվող բանկերում սույն

Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների հաշիվներ բացելու եւ վարելու կարգի վերաբերյալ համաձայնեցված մոտեցումներ,

3) Կողմերը ելնում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների կողմից իրենց բանկային հաշիվներ պարտադիր փոխանցման ենթակա դրամական միջոցների ռեպատրիացիայի պահանջի վերաբերյալ մոտեցումներ մշակելու նկատմամբ ազգային ինքնիշխանությունը պահպանելու սկզբունքից:

4) Կողմերը սահմանում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների միջեւ իրականացվող արժութային գործառնությունների ցանկը, որոնց նկատմամբ չեն կիրառվում արժութային սահմանափակումներ,

5) Կողմերը համաձայնեցված կերպով սահմանում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների իրավունքների եւ պարտավորությունների անհրաժեշտ ծավալները՝ արժութային գործառնություններ իրականացնելիս՝ ներառյալ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքում գտնվող բանկերում առանց բանկային հաշիվներ օգտագործելու հաշվարկներ իրականացնելու իրավունքը,

6) Կողմերն ապահովում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների կողմից իրենց բանկային հաշիվներ պարտադիր փոխանցման ենթակա դրամական միջոցների ռեպատրիացիայի վերաբերյալ պահանջների ներդաշնակեցումը,

7) Կողմերն ապահովում են Մաքսային միության միասնական մաքսային տարածքի սահմաններում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների եւ ոչ ռեզիդենտների կողմից դրամական միջոցների եւ փաստաթղթային ձեւով արժեթղթերի ազատ տեղափոխումը,

8) Կողմերն ապահովում են արժութային գործառնությունների հաշվառման եւ հսկողության նկատմամբ պահանջների ներդաշնակեցումը,

9) Կողմերն ապահովում են արժութային կարգավորման եւ արժութային հսկողության ոլորտում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրության եւ արժութային կարգավորման մարմինների ակտերի դրույթները խախտելու համար պատասխանատվության մասին նորմերի ներդաշնակեցումը:

## Հոդված 5

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների արժութային հսկողություն իրականացնող լիազոր մարմինների փոխգործակցությունն իրականացվում է՝

1) տեղեկատվության փոխանակման.

արժութային կարգավորման եւ արժութային հսկողության ոլորտում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրության պահպանման վերահսկողության բնագավառում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների հսկող եւ իրավապահ մարմինների փորձի վերաբերյալ,

արժութային կարգավորման եւ արժութային հսկողության ոլորտում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրության պահպանման վերահսկողության համակարգի կատարելագործմանն ու գործունեությանն առնչվող միջոցառումների վերաբերյալ,

2) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ռեզիդենտների կողմից արժութային գործառնություններն իրականացնելիս օրենսդրության խախտումների հայտնաբերման ոլորտում համագործակցության,

3) արժութային հսկողության բնագավառում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների փոխադարձ շահերը շոշափող խնդիրների միասնական վերլուծական հետազոտություններ անցկացնելու,

4) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների արժութային հսկողություն իրականացնող լիազոր մարմինների փոխգործակցության ոլորտում համագործակցության այլ հարցերի շուրջ փոխգործակցության միջոցով:

## Հոդված 6

1. Սույն Համաձայնագրի մասնակից պետություններից յուրաքանչյուրը բացառիկ դեպքերում (եթե իրավիճակը չի կարող լուծվել տնտեսական քաղաքականության այլ միջոցներով) իրավասու է արժութային սահմանափակումներ սահմանել՝ մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածով:

2. Բացառիկ դեպքերին են դասվում՝

1) այնպիսի հանգամանքների առաջացում, որոնց դեպքում ազատականացման միջոցառումների իրականացումը կարող է առաջացնել տնտեսական եւ ֆինանսական իրավիճակի վատթարացում,

2) վճարային հաշվեկշռում իրավիճակի բացասական զարգացումը, որի հետեւանքով կարող է նվազել ոսկու եւ արժույթի պահուստների ընդունելի մակարդակը,

3) այնպիսի հանգամանքների առաջացումը, որոնց դեպքում ազատականացման միջոցառումների իրականացումը կարող է վնաս հասցնել պետության անվտանգությանը եւ խոչընդոտել հասարակական կարգի պահպանմանը,

4) պետության արժույթի փոխարժեքի կտրուկ տատանումները,

3. Արժութային սահմանափակումներ սահմանելու մասին ծանուցումներն ուղարկվում են մի Կողմից մյուս Կողմերին՝ այդպիսի սահմանափակումներ սահմանելու պահից 15-օրյա ժամկետից ոչ ուշ:

## Հոդված 7

1. Սույն Համաձայնագրի կիրարկումն ապահովվում է՝

1) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների համապատասխան լիազոր մարմինների կողմից սույն Համաձայնագրի կիրարկման վերաբերյալ միջոցառումները համաձայնեցնելու նպատակով խորհրդակցություններ անցկացնելու,

2) առանձին դեպքերում՝ սույն Համաձայնագրի 3-5-րդ հոդվածների դրույթների կիրարկման համար համապատասխան միջազգային պայմանագրեր կնքելու միջոցով:

2. Սույն Համաձայնագրի 3-5-րդ հոդվածների դրույթների կիրարկման համար Կողմերը սահմանել են միջազգային պայմանագրերի ստորագրման հետեւյալ ժամկետները՝

1) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի միջեւ սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի վերաբերյալ պայմանագրեր կնքելը՝ մինչեւ 2011 թվականի սեպտեմբերը,



2) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունների եւ կենտրոնական (ազգային) բանկերի միջեւ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի վերաբերյալ պայմանագրեր կնքելը՝ մինչեւ 2011 թվականի սեպտեմբերը,

3) սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունների եւ կենտրոնական (ազգային) բանկերի միջեւ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի վերաբերյալ պայմանագրեր կնքելը՝ մինչեւ 2011 թվականի սեպտեմբերը:

### **Հոդված 8**

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների իրավունքները եւ պարտավորությունները, որոնք բխում են մյուս միջազգային պայմանագրերից, որոնց մասնակիցներն են նրանք հանդիսանում:

### **Հոդված 9**

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Արձանագրության մեջ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

### **Հոդված 10**

Կողմերի միջեւ վեճերը, կապված սույն Արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրարկման հետ, առաջին հերթին լուծվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

Եթե վեճի կողմերը վեճը չեն կարգավորում խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով վեճի մի կողմից վեճի մյուս կողմին դրանք անցկացնելու վերաբերյալ պաշտոնական գրավոր խնդրանք հղելու օրվանից վեց ամսվա ընթացքում, ապա, վեճի կողմերի միջեւ դրա լուծման վերաբերյալ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը փոխանցել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

## Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից, որը Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման կոմիտեն է, սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար Կողմ պետությունների կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու ամսաթվից հետո 30 օրը լրանալու պահին:

Սույն Համաձայնագիրը բաց է այլ պետությունների կողմից մասնակցության համար, որոնք դարձել են 2003 թվականի սեպտեմբերի 19-ի «Միասնական տնտեսական տարածքի ձեւավորման մասին» համաձայնագրի եւ 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Միասնական մաքսային տարածքի ստեղծման եւ մաքսային միության ձեւավորման մասին» պայմանագրի մասնակիցներ: Սույն Համաձայնագրին միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում են ավանդապահին:

Միացած պետությունների համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից՝ միանալու մասին փաստաթղթերն ստանալու ամսաթվից հետո 30 օրը լրանալու պահին:

Կատարված է քաղաք Մոսկվայում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն լեզվով:

Բնօրինակը պահվում է ավանդապահի մոտ, որը Կողմերից յուրաքանչյուրին կուղարկի դրա հաստատված օրինակը:

(Ստորագրություններ)